ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«25» օգոստոսի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ _____ Մ. Անանյան

ԳԲԽ-84/16 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Դրայվ-2014» ՍՊԸ-ի 08.08.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. **«Դրայվ-2014» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 08.08.2016թ. ներկայացրած բողոքով «Դրայվ-2014» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ Զարենցավան համայնքի «Մաքուր Զարենցավան» ՀՈԱԿ-ի կողմից սեղմված բնական գազի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՁՔ-ՄՁՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/8» ծածկագրով շրջանակային համաձայ-

նագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցելու նպատակով Ընկերությունը հայտ է ներկայացրել:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.08.2016թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած հայտերի բացման նիստի արդյունքում պարզ է դարձել, որ Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկն ամենացածրն է եղել: Հաջորդ նիստը նշանակվել է 03.08.2016թ. ժամը 15:00-ին, որի վերաբերյալ «Դրայվ-2014» ՍՊԸ-ն պատշաճ չի ծանուցվել և նիստին ներկա չի գտնվել:

Ընկերությունը նշել է, որ 03.08.2016թ. ժամը 17:00-ին gnumnerlusavan@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեից ստացվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.08.2016թ. ժամը 15:00-ին և 03.08.2016թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստերի համապատասխանաբար թիվ 2 և թիվ 3 արձանագրությունները, ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքապետարանի թիվ 844-16 գրությունը և ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության 24.06.2015թ. թիվ 7/231/8515-15 գրությունը: Վերը նշված թիվ 3 արձանագրության 1.2 կետով՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նշել է, որ Ընկերության կողմից հայտի թիվ 4 հավելվածը՝ գնային առաջարկը ներկայացվել է հրավերի պահանջներին անհամապատասխան:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 10.02.2015թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 44-րդ կետով և հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ղեկավարի 03.08.2016թ. թիվ 844-16 գրությունը, վերը նշված արձանագրության 1.3 կետով որոշել է մերժել Ընկերության հայտը:

«Դրայվ-2014» ՍՊԸ-ն հայտնել է, որ վերջինիս հայտի հավելված N 4 գնային առաջարկը ներկայացվել է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան: Ընկերության կողմից հայտով առաջարկվել է ավելի ցածր գին (2010977,32 ՀՀ դրամ), քան Ընթացակարգի մյուս մասնակցի՝ «Արմինե» Ա/Կ-ի հայտով ներկայացրած գնային առաջարկն է (2129220 ՀՀ դրամ):

Ըստ Ընկերության՝ վերջինիս հայտը համապատասխանել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

«Դրայվ-2014» ՍՊԸ-ն գտնում է, որ վերը նշված թիվ 3 արձանագրության 1.2 կետում նշված այն հիմքը, որ Ընկերության կողմից հայտի գնային առաջարկը ներկայացվել է

Ընթացակարգի հրավերի պահանջներին անհամապատասխան, չի համապատասխանում իրականությանը: Ըստ Ընկերության՝ համայնքի ղեկավարը իրավասու չէ վճռելու «Դրայվ-2014» ՍՊԸ-ի կողմից իրականացվող գործունեության օրինականությունը կամ հակաօրինականությունը: Ինչպես նաև, Ընկերությունը նշել է, որ համայնքի ղեկավարը իրավասու չէ մերժել կամ որևիցե այլ որոշում կայացնել Ընթացակարգին մասնակցելու վերաբերյալ, այդ լիազորությունը «Գնումների մասին» ՀՀ օրենքով վերապահված է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը խնդրել է դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.08.2016թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստի N 3 արձանագրության 1.3 կետով՝ «Դրայվ-2014» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

2. **<u>Չարենցավան համայնքի «Մաքուր Չարենցավան» ՀՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>**

Չարենցավան համայնքի «Մաքուր Չարենցավան» ՀՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 18.08.2016թ. թիվ 35 գրությամբ «Դրայվ-2014» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է, որ Պատվիրատուի կողմից սեղմված բնական գազի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՉՔ-ՄՉՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/8» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 20.07.2016թ. ժամը 15:00-ին կայացված նիստում հաստատվել է Ընթացակարգի հրավերի տեքստը:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 24-րդ հոդվածի 1-ին մասի և Կարգի 37-րդ կետի դրույթներով՝

ա) «ՉՔ-ՄՉՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/8» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը հրապարակվել է www.gnumner.am համացանցային կայքում, որի արդիականության ժամկետ է սահմանվել 21.07.2016թ.-ից մինչև 01.08.2016թ. ժամը 15:00-ն:

բ) Ընթացակարգի հրավերն էլեկտրոնային եղանակով միաժամանակյա ծանուցմամբ ուղարկվել է Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝

հրապարակված շրջանակային համաձայնագրեր կնքած բոլոր մասնակիցներին՝ aprang-15-22@shh.gnumner.am էլեկտրոնային փոստի հասցեին:

Ընթացակարգի հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 2016թ. օգոստոսի 1-ին ժամը 15:00-ին: Ընթացակարգի 1-ին չափաբաժնին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել թվով 2 մասնակիցներ:

Պատվիրատուն հայտնել է, որ Կարգի 47.1 կետի դրույթներին համապատասխան՝ հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակվել է www.gnumner.am համացանցային կայքում:

Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի և Կարգի 44-րդ կետի դրույթներին համապատասխան՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են մասնակիցների կողմից ներկայացված հայտերը և 2016թ. օգոստոսի 3-ին ժամը 15:00-ին կայացած նիստում ամփոփվել են գնահատման արդյունքները: Ղեկավարվելով Կարգի 44-րդ կետով և հիմք ընդունելով Զարենցավան համայնքի ղեկավարի 2016թ. օգոստոսի 3-ի թիվ 844-16 գրությունը՝ հանձնաժողովը մերժել է «Դրայվ-2014» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը: Ընթացակարգի արդյունքում, 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Արմինե» ԱԿ-ն:

Համաձայն Կարգի 47-րդ կետի՝ 03.08.2016թ. հարցում է ներկայացվել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու, ինչպես նաև հրավերի 2.3 կետի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ծանուցվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝ առաջարկվելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Մասնակցի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են համապատասխան փաստաթղթերը:

Պատվիրատուն հայտնել է, որ 05.08.2016թ. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվել է հարցման մասին համապատասխան եզրակացությունը:

Այնուհետև, 08.08.2016թ. ժամը 10:00-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովի կողմից ընտրված մասնակից է ճանաչվել «Արմինե» ԱԿ-ն և սահմանվել է անգործության ժամկետ:

Թեև «Դրայվ-2014» ՍՊԸ-ն հայտով ներկայացրել է ավելի ցածր գնային առաջարկ, այնուամենայնիվ, նա չի ճանաչվել որպես 1-ին տեղ զբաղեցրած մասնակից, քանի որ ի սկզբանե վերջինիս գործունեությունը հակաօրինական է, չունի սեղմված բնական գազ վաճառելու թույլտվություն և չի հանդիսանում հրավերով նախատեսված ԱԳԼՃԿ:

Այսպիսով, «Դրայվ-2014» ՍՊԸ-ին պատկանող Եսայա 8-10 հասցեում գործող գազալցակայանը հանդիսանում է ապօրինի, և այն չի փաստագրվել կադաստրի պետական կոմիտեում որպես ԱԳԼՃԿ, որովհետև չի բավարարում ՀՀ կառավարության 28.08.2008թ. «Ավտոգազալիցքավորման ճնշակայանների (ԱԳԼՃԿ) կառուցման և շահագործման նվազագույն պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1101 որոշման 18-րդ կետով սահմանված պահանջները, որի պատճառով էլ Չարենցավանի համայնքապետարանի կողմից չի տրամադրվել սեղմված բնական գազի վաճառք իրականացնելու թույլտվություն:

«Դրայվ-2014» ՍՊԸ-ի գործունեությունը հակասում է մի շարք պահանջների, մասնավորապես՝

1) համաձայն «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետ է համարվում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով հատկացված վայրերում քաղաքաշինական և տեխնիկական անվտանգության նորմերին համապատասխան կառուցված՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի օրենքով և այլ իրավական ակտերի պահանջները բավարարող լցավորման մշտական (ստացիոնար) կայանը,

2) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ համայնքի ղեկավարն առևտրի և ծառայությունների բնագավառում որպես պարտադիր լիազորություն «7» տալիս է համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների թույլտվություն,

3) համաձայն «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի՝ ԱԳԼՃԿ-ները համարվում են արտադրական վտանգավոր օբյեկտներ, որոնց նախագծա-նախահաշվային փաստաթղթերը պետք է համապատասխանեն քաղաքաշինական նորմերին և ունենան համալիր փորձաքննական դրական եզրակացություն:

ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի ղեկավարի 24.06.2016թ. թիվ 7/231/8518-15 գրությամբ տեղեկացվել է, որ «Դրայվ-2014թ.» ՍՊԸ-ին պատկանող Եսայան 8-10 հասցեում գտնվող ԱԳԼՃԿ-ի հակահրդեհային վիճակի և շահագործման վերաբերյալ որևէ դրական եզրակացություն չի տրվել:

Ըստ Պատվիրատուի՝ վերոգրյալից ակնհայտ է, որ Ընկերության կողմից իրականացվող գործունեությունը հանդիսանում է սահմանված պահանջներին չբավարարող, առանց համապատասխան լիցենզիայի առկայության և անվտանգության նորմերի պահպանման վերաբերյալ եզրակացության բացակայությամբ, ինչպես նաև ԱԳԼՃԿ-ների համար սահմանված պայմաններին չբավարարող գործունեություն, այդ իսկ պատճառով էլ հանձնաժողովը մերժել է վերջինիս հայտը:

Ինչ վերաբերում է բողոքում նշված հանգամանքին, որ համայնքի ղեկավարն իրավունք չուներ միջամտելու գնման գործընթացին, ապա այս կապակցությամբ Պատվիրատուն նշել է, որ հանդիսանում է համայնքային ոչ առևտրային կազմակերպություն, որի հիմնադիրը հանդիսանում է համայնքը, ֆինանսավորումը կատարվում է համայնքի կողմից, և համայնքապետարանն ի սկզբանե պայքարել է Ընկերության ապօրինի գործունեության դեմ, հետևաբար «Մաքուր Զարենցավան» ՀՈԱԿ-ին տեղեկացնելը հանդիսանում է համայնքի ղեկավարի պարտականությունը:

3. <u>ԳԲԽ-84/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-84/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Զարենցավան համայնքի «Մաքուր Զարենցավան» ՀՈԱԿ-ի կողմից սեղմված բնական գազի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՁՔ-ՄՁՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/8» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ՝

Ընթացակարգ) մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Դրայվ-2014» ՍՊԸ-ն և «Արմինե» ԱԿ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 01.08.2016թ. ժամը 11:27-ին տեղի ունեցած նիստի թիվ 1 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով «Դրայվ-2014» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի հայտ պարունակող ծրարը Պատվիրատուին ներկայացվել է Օրենքի 27-րդ հոդվածի և ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 5.2 կետի պահանջների խախտմամբ, մասնավորապես, ծրարի վրա բացակայել է Պատվիրատուի անվանումը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 01.08.2016թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 2.1 կետով որոշում է կայացրել «Դրայվ-2014» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ամբողջական և լիարժեք գնահատման նպատակով սույն նիստն ընդհատել և հաջորդ նիստը հրավիրել լսելու 03.08.2016թ. ժամը 15:00-ին, ք. Երևան, Չարենցավան, Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1 հասցեում:

4. Ընթացակարգին մասնակցելու նպատակով «Դրայվ-2014» ՍՊԸ-ն հայտի թիվ 4 հավելվածը՝ գնային առաջարկը ներկայացրել է հետևյալ տեսքով՝

(ՀՀ դրամ)

Չափաբաժինների համարները	Ապրանքի անվանումը	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ*	Առաջարկված ընդհանուր գինը (տառերով և թվերով)
1	2	3	4	5	6
1	Սեղմված բնական գազ	1 585 988	89 826,43	335 162,89	2010977,32 (երկու միլիոն տաս հազար ինը հարյուր յոթանասունյոթ ամբողջ երեսուներկու ***դասնորդական***)

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.08.2016թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստի N 3 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ Ընկերության կողմից ներկայացված հայտը (հայտում ներառված փաստաթղթերը) կազմվել են հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ՝ գնի առաջարկում (հավելված N 4) 1-ին չափաբաժնով առաջարկած ապրանքի թվերով գրված ընդհանուր գինը չի համապատասխանում տառերով գրված ընդհանուր գնին:

6. Չարենցավան համայնքը 03.08.2016թ. թիվ 844-16 գրությամբ դիմել է «Դրայվ-2014» ՍՊԸ-ին՝ հայտնելով, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով Ընկերության ներկայացրած դիմումը մերժվում է, քանի որ վերջինիս պատկանող գազալցակայանը հանդիսանում է ապօրինի և այն չի փաստագրվել Կադաստրի պետական կոմիտեում որպես

ԱԳԼՃԿ, որովհետև չի բավարարում ՀՀ կառավարության 28.08.2016թ. «Ավտոգազալիցքավորման ճնշակայանների (ԱԳԼՃԿ) կառուցման և շահագործման նվազագույն պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1101 որոշման 18-րդ կետով սահմանված պահանջները, որի պատճառով էլ Չարենցավանի համայնքապետարանի կողմից չի տրամադրվել սեղմված բնական գազի վաճառք իրականացնելու թույլտվություն:

Նույն գրությամբ նշվել են նաև մի շարք իրավանորմեր, որոնց հակասում է Ընկերության գործունեությունը:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը վերը նշված արձանագրության 1.3 կետով, ղեկավարվելով Կարգի 44-րդ կետով և հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ղեկավարի 03.08.2016թ. թիվ 844-16 գրությունը, որոշել է մերժել «Դրայվ-2014» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

8. ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ ի դեմս ԳԲԽ-84/16 բողոքը քննող հանձնաժողովի, 12.08.2016թ. կայացրած որոշմամբ բավարարել է «Դրայվ-2014» ՍՊԸ-ի միջանկյալ ընթացակարգ կիրառելու վերաբերյալ պահանջը:

4. <u>ԳԲԽ-84/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Դրայվ-2014» ՍՊԸ-ի 08.08.2016թ. ներկայացրած բողոքը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, Չարենցավան համայնքի «Մաքուր Չարենցավան» ՀՈԱԿ-ի 18.08.2016թ. թիվ 35 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից

նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը: Եթե առաջարկվող գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա դրանք համեմատվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ հրավերով սահմանված փոխարժեքով:

Կարգի 44-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման առարկայի ընդհանուր գինը՝ մեկ թվով արտահայտված:

Կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են ***հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկը*** կամ հայտի ապահովումը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ ***գնային առաջարկը*** կամ հայտի ապահովումը ***ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան,*** ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ *հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը* հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում

է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:

Այսպիսով, Ընկերությունն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտի N 4 հավելվածով՝ գնային առաջարկով առաջարկել է պայմանագիրը կատարել՝ նշելով գինը թվերով՝ 2010977,32 ՀՀ դրամ, տառերով՝ երկու միլիոն տաս հազար ինը հարյուր յոթանասունյոթ ամբողջ երեսուներկու ***տասնորդական:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 03.08.2016թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստի N 3 արձանագրության 1.2 կետով արձանագրել է, որ «Դրայվ-2014» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած գնի առաջարկում (հավելված N 4) 1-ին չափաբաժնով առաջարկած ապրանքի ***թվերով գրված ընդհանուր գինը չի համապատասխանում տառերով գրված ընդհանուր գնին***:[1]

Մինչդեռ, Կենտրոնը գտնում է, որ այս պարագայում Պատվիրատուն պետք է առաջնորդվեր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով, այն է՝ Ընկերության գնային առաջարկում արձանագրելով անհամապատասխանություն տառերով և թվերով գրված գումարների միջև, պետք է հիմք ընդուներ տառերով գրված գումարը:

Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է նշել, որ Չարենցավան համայնքը 03.08.2016թ. «Դրայվ-2014» ՍՊԸ-ին հասցեագրված թիվ 844-16 գրությամբ հայտնել է, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով Ընկերության ներկայացրած դիմումը մերժվում է, քանի որ վերջինիս պատկանող գազալցակայանը հանդիսանում է ապօրինի և այն չի փաստագրվել Կադաստրի պետական կոմիտեում որպես ԱԳԼՃԿ, որովհետև չի բավարարում ՀՀ կառավարության 28.08.2016թ. «Ավտոգազալիցքավորման ճնշակայանների (ԱԳԼՃԿ) կառուցման և շահագործման նվազագույն պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1101 որոշման 18-րդ կետով սահմանված պահանջները, որի պատճառով էլ Չարենցավանի համայնքապետարանի կողմից չի տրամադրվել սեղմված բնական գազի վաճառք իրականացնելու թույլտվություն:

---

[1] Մասնակիցը ներկայացրած գնի առաջարկում տառերով գրված գումարի մեջ ստորակետից հետո «երեսուներկու ***հարյուրերրորդական***» արտահայտության փոխարեն նշել է «երեսուներկու ***տասնորդական***»-ը, մինչդեռ մասնակիցը կարող էր, առհասարակ, չնշել թվի մոտ «***տասնորդական*** *կամ* «***հարյուրերրորդական***» բառերից որևէ մեկը:

Այսպիսով, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 03.08.2016թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստի N 3 արձանագրության 1.3 կետով որոշել է, ղեկավարվելով Կարգի 44-րդ կետով և հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ղեկավարի 03.08.2016թ. «Դրայվ-2014» ՍՊԸ-ին հասցեագրված թիվ 844-16 գրությունը, մերժել Ընկերության հայտը:

Չարենցավան համայնքի 03.08.2016թ. «Դրայվ-2014» ՍՊԸ-ին հասցեագրված թիվ 844-16 գրությամբ հայտնած Ընթացակարգին մասնակցելու նպատակով Ընկերության ներկայացրած դիմումը մերժելու փաստարկների կապակցությամբ Կենտրոնը գտնում է, որ վերը նշված գրությունն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.08.2016թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած հայտերի բացման նիստում Ընկերության հայտը մերժելու հիմքում դնելու հանգամանքը չի բխում Կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջներից:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի 18.08.2016թ. թիվ 35 գրությամբ Կենտրոնին հայտնած այն դիրքորոշմանը, որ «Դրայվ-2014» ՍՊԸ-ն հայտով ներկայացրել է ավելի ցածր գնային առաջարկ, այնուամենայնիվ նա չի ճանաչվել որպես 1-ին տեղ զբաղեցրած մասնակից, քանի որ ի սկզբանե վերջինիս գործունեությունը հակաօրինական է, չունի սեղմված բնական գազ վաճառելու թույլտվություն և չի հանդիսանում հրավերով նախատեսված ԱԳԼՃԿ, ապա Կենտրոնը հայտնում է, որ միայն հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը պետք է էլեկտրոնային եղանակով ծանուցեր առաջին տեղը զբաղեցրած մասնակցին և առաջարկեր երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, դրանք Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից գնահատելու նպատակով: Մինչդեռ, Պատվիրատուն չպահպանելով Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջները, դեռևս հայտերի բացման փուլում Ընկերությանը հայտի մերժման հիմքում դնելով Չարենցավան համայնքի ղեկավարի 03.08.2016թ. «Դրայվ-2014» ՍՊԸ-ին հասցեագրված թիվ 844-16 գրությունը՝ գործել է ոչ իրավաչափ:

Այսպիսով, Կենտրոնը գտնում է, որ «Դրայվ-2014» ՍՊԸ-ի 08.08.2016թ. բողոքով ներկայացրած Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.08.2016թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստի N 3 արձանագրության 1.3 կետով՝ Ընկերության հայտը մերժելու մասին որոշումը դադարեցնելու պահանջը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «Դրայվ-2014» ՍՊԸ-ի 08.08.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել. դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.08.2016թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստի N 3 արձանագրության 1.3 կետով՝ Ընկերության հայտը մերժելու մասին որոշումը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-84/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան